

կանէ եւ ' իթագաւորաց՝ փայլեանց իմն եղեւ Լեւոն՝ համօրէն մեծութեամբն. այլ մեծ՝ իկեանսն՝ թերեւս մեծագոյն յետ մահուն ցուցաւ, թողլով՝ իհաստատութեան զթագաւորութիւնն՝ յորոյ կանգնումն նկրտեալ էր մահուչափ ճգամբ եւ հոգովք. պսակեցան ջանք եւ իղձ նորին՝ իբաղդէ, որ է ասել՝ գործակցութեամբ հաւատարմացն եւ կամօք վերին այցելութեանն: Եւ զի զայս գործ, այսինքն է՝ զյաջորդութիւն աթոռոյն՝ իբրեւ ճաճանչ ինչ ստուերախառն յետ խոնարհելոյ արեւուն իւրոյ՝ թողեալ էր Լեւոնի՝ ' ի պատմութեանս մերում, արժան է՝ իրովանդակութիւն պատկերի կենացն՝ պարզել եւ զթերին. որով եւ յստակագոյն համօրէնն երեւիցի նկարագիր:

#### Գ. Ակնկալութեան թագին

Տեսաք ամաւ յառաջ քան զմահն՝ հռչակեալ՝ ի Լեւոնէ յետին կտակաւ եւ քահանայապետական կոնդակաւ հաստատեալ՝ ժառանգ թագաւորութեան իւրոյ գերախայ դուստր իւր Զապել, եւ զխօսեցեալ փեսայն հեռաւոր զԱնդրէ՝ որդի թագաւորին Ունգարաց. յորմէ՝ անագան ուրեմն յետ վախճանի Լեւոնի դարձան հրեշտակքն առաքեալք, բերելով զրոյց՝ զի փոխեալ է արքայն Ունգարաց՝ իմացն խորհրդոյ, ոչ զիտեմ է՝ ր աղագաւ, եւ ոչ եւս կամի առաքել զտղայ որդին՝ իշայս: Համբաւս՝ որպէս եւ էր բնական՝ ' իվարանս արկ զինամակալսն, զՊայլս<sup>235</sup> եւ զպարոնայս, այլ եւ յերկպառակութիւն. յոր յաւելան եւ ինքնամատոյց յառաջաձգութիւնք փափագողաց թագին եւ ժառանգութեանն, եւ սպանումն Սիր Ատանայ՝ ' իշաշիշեաց (Աւագակաց),՝ իմին իսկ՝ իՄիս մայրաքաղաքի,՝ իիողոցին՝ որ տանէր յեկեղեցին Բարսումայ: Իշխեցին ոմանք կասկածել կամակցութեամբ Կոստանդեայ գունդստապլի Պայլի՝ երկրորդ ինամակալի արքայդստերն՝ եղեալ զոճիրն, որում չտան ինչ փաստս. թերեւս կարծելով առ քինու գերութեանն՝ իՔէյքաուզայ, զի՝ իմարտին որ՝ ի Շողականն՝ ոչ օգնեաց նմա Ատան, մանաւանդ եթէ արգել զկատարեալ յաղթանակն, զնա՝ իմիջի թողլով թշնամեաց՝ եւ ինքն՝ իբաց կամ՝ ի փախուստ դառնալով. բայց զայս չէ ուրուք ասացեալ, եւ ոչ մեք առ հաւանութեան:– Կոստանդին որդի զովով քեռոյ Լեւոնի, մարթի կոչիլ եւ

<sup>235</sup> Օրէնք Ասսիզացն Երուսաղեմի պատուիրեն Պայլս երկուս կարգել անտիական որբոց պայազատաց. զմին՝ ի պահպանութիւն անձանց նոցին, եւ զմիւսն՝ ի զգուշութիւն ընչից նոցին. ըստ այսմ օրինակի այսպէս արարեալ էր եւ Լեւոնի: